

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԵՊՀ պրոբեկտոր,
Ռ. Հ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ



«.....» Նոյեմբերի 2025թ.

ԿԱՐՏՔ

Հարություն Արմենի Մաթեմատիկական համալսարանի «Տալիքանի գործոնն ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ»

Է.00.02. «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման առենախոսության վերաբերյալ

Հաստատված է ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի 2025 թ. նոյեմբերի 19-ի նիստում (արձանագրություն թիվ 5): Նիստին մասնակցում էին Է. Զոհրաբյանը, Ա. Դարբինյանը, Ք. Կոստիկյանը, Հ. Ալեքսայնանը, Հ. Մխոյանը, Ք. Մելքոնյանը, Դ. Ափինյանը, Ա. Տետեյանը, Ա. Դարբինյանը, Լ. Մելիքյանը, Ա. Աբելյանը, Բ. Ղազարյանը, Ա. Ծատրյանը և Ի. Քաղաքյանը:

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է ժամանակակից համաշխարհային պատմության և միջազգային հարաբերությունների ամենաարդիական և ցավոտ հանգույցներից մեկին: Թեմայի արդիականությունը կասկածից վեր է, հատկապես 2021թ. Աֆղանստանում տեղի ունեցած դրամատիկ իրադարձությունների լույսի ներքո, որոնք փաստացի գրոյացրին ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների 20-ամյա ռազմաքաղաքական ներդրումները:

Հ. Մաթենոյանը նպատակ է դրել ուսումնասիրել ԱՄՆ-Տալիբան հարաբերությունների դինամիկան 1996-2021 թթ.' վերլուծելով ԱՄՆ հինգ վարչակազմերի քաղաքականությունը: Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ՝ ներածությունից, չորս հիմնական գլուխներից, եզրակացությունից և աղբյուրների ծավալուն ցանկից:

Հեղինակը ներգրավել է աղբյուրների լայն շրջանակ՝ ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարություններ, նախազահական ելույթներ, գաղտնազերծված դիվանագիտական հեռագրեր, ՄԱԿ-ի բանաձևեր և հայտնի արևմտյան ու հայաստանյան հեղինակների աշխատություններ:

Ասենախոսության նշանակությունն առաջին հերթին պայմանավորված է 1996-2021 թվականների երկարատև և բազմաշերտ ժամանակաշրջանի համակարգային վերլուծությամբ: Նման շրջանակի ընտրությունը հնարավորություն է տվել հեղինակին ներկայացնել ԱՄՆ արտաքին քաղաքականության էվոլյուցիան Աֆղանստանում:

Չնայած որ աշխատանքը հիմնված է նախորդ հետազոտությունների վրա, հեղինակին հաջողվել է ներկայացնել թեմայի արդիական մեկնաբանում և ձևակերպել նոր դիտարկումներ, որոնք կարող են օգտակար լինել ոլորտի մասնագետների համար: Բացի այդ, գովելի է պատմական նյութը միջազգային հարաբերությունների տեսությունների՝ ուսալիզմի, նեռապահպանողականության և լիբերալիզմի համատեքստում վերլուծելու փորձը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս անցում կատարել փաստական իրադարձությունների պարզ շարադրանքից դեպի դրանց մեկնաբանությունը՝ գաղափարական դրվագինների փոխազդման և բախման տեսանկյունից: Գիտական նորույթի տարր է պարունակում թրամփի վարչակազմի օրոք ընթացող բանակցությունների վերաբերյալ ամերիկյան առաջատար մամուլի արձագանքների վերլուծությունը, ինչը ցույց է տալիս ԱՄՆ ներքին դիսկուրսը:

Ասենախոսությունը ունի տրամբանական և հստակ կառուցվածք: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլխից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթաբաժինների, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունը պատկերացում է տալիս ատենախոսության գիտական հարցադրումների և մի շարք հայեցակարգային կարևոր տեսակետների մասին: Վերջինում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, լուսաբանվում են նպատակը

և խնդիրները, գիտական նորույթը, ժամանակագրական սահմաները, մեթոդաբանական հիմքը, գիտական և կիրառական նշանակությունը, տրվում են աշխատանքի կառուցվածքը և օգտագործված աղյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը «ԱՄՆ-Աֆղանստան հարաբերությունների պատմա-քաղաքական էվոլյուցիան և Տալիբանի ձևավորման գործընթացը 20-րդ դարի երկրորդ կեսին» ներկայացնում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-Աֆղանստան հարաբերությունների դինամիկան, Աֆղանստանում քաղաքական գործընթացների փոփոխությունները, ինչպես նաև այն կառուցվածքային և գաղափարական գործոնները, որոնք նպաստեցին «Տալիբանի» առաջացմանը և Աֆղանստանում դիրքերի ամրապնդմանը:

Երկրորդ գլխում «ԱՄՆ-ի քաղաքականությունը Աֆղանստանի նկատմամաբ Տալիբանի և հետ-տալիբանյան շրջանում (1996-2008 թթ.)», ատենախոսը դիտարկում է 1996-2008 թթ. Աֆղանստանում ամերիկյան ռազմավարությունների և միջամտության հիմքերը, արտաքին քաղաքականության քայլերի դինամիկան, ինչպես նաև տարածաշրջանային ու միջազգային գործոնների ազդեցությունը՝ անվտանգության, քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների վրա:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Աֆղանստանը ԱՄՆ արտաքին քաղաքականության առաջնահերթությունների ու ներգրավման մեխանիզմների համատեքստում (2009-2016թթ.)», ուսումնասիրվում է Օբամայի վարչակազմի ռազմավարական ուղղություններն Աֆղանստանում, ԱՄՆ ռազմական և քաղաքական ներգրավման ձևերը, ինչպես նաև արտաքին և տարածաշրջանային գործոնների ազդեցությունը անվտանգության և քաղաքական գործընթացների վրա:

Չորրորդ գլուխը՝ «ԱՄՆ քաղաքականությունը Աֆղանստանի հարցում (2016-2021 թթ.) և Դոհայի համաձայնագիրը (2020թ.)(Դ.Թրամփի և Ջ.Բայդենի վարչակարգերի քաղաքականության համեմատական վերլուծություն)», ներկայացնում է վերը նշված տարիների ԱՄՆ ռազմավարական մոտեցումները Աֆղանստանի հարցում, Դոհայի համաձայնագրի բանակցային գործընթացները և դրանց ընթացքը, ինչպես նաև Թրամփի և Բայդենի վարչակարգերի քաղաքական որոշումների ազդեցությունը՝ տարածաշրջանային անվտանգության, քաղաքական գործընթացների և ԱՄՆ արտաքին քաղաքականության շարունակականության վրա: Աշխատանքի ուժեղ

Կողմերից է Դոհայի 2020 թ. համաձայնագրի (Ենթագլուխ 4.2) վերլուծությունը՝ որպես ոչ թե պարզապես զորքերի դուրսերման պայմանագիր, այլ ԱՄՆ-ի կողմից իր 20-ամյա «պետականաշինության» նախագծի ձախողման փաստացի ընդունում:

Եզրակացությունների բաժնում ներկայացվում է հետևագույնության արդյունքում ծեռը բերված արդյունքները:

Հեղինակը ներկայացրել է հիմնավոր և համակողմանի ուսումնասիրություն, որն էապես տարբերվում է թեմային նվիրված նմանօրինակ աշխատություններից: Առաջին հերթին այն տարբերվում է իր համակողմանիությամբ, հարցերի լայն շրջանակների ընդգրկմամբ: Երկրորդ էական տարբերությունը աղբյուրների և գրականության լայն բազան :

Ատենախոսությունում հստակ պահպանված է առաջադրված խնդիրների, դրանց լուծումների և տեքստից բխող եզրակացությունների միջև գիտաշափորոշիչային կապը: Աշխատանքը կազմված է գիտական բարեխոճությամբ և գիտահմաստավորման սկզբունքների պահպանմամբ: Հեղինակը հետևել է երևոյթների ուսումնասիրման պատմահամեմատական և միջառարկայական վերլուծական մեթոդներին, ինչի շնորհիվ ներկայացվող նյութը ծեռը է բերել ամբողջական, համակազմված և համակարգված տեսք:

Աշխատանքը ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական կիրառական նշանակություն: Այն կարող է օգտակար լինել ինչպես նոր և նորագույն պատմության խնդիրներին նվիրված ուսումնասիրությունների, բուհերի դասախոսների և ուսանողների համար, այնպես էլ << արտաքին և անվտանգային քաղաքականության տեսանկյունից:

Ատենախոսի կողմից կատարվել է ծավալուն և կարևորություն ունեցող ուսումնասիրություն, սակայն առկա են որոշ թերություններ և բացթողումներ, որոնցից հիշատակման են արժանի հետևյալները.

- 1.Ատենախոսության վերնագիրն է «Տալիբանի գործոնն ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ», սակայն աշխատանքի ներածությունում կամ մեթոդաբանական բաժնում հեղինակն այդպես էլ չի սահմանում և չի գործառնականացնում «գործոն» հայեցակարգը: Այն սպառնալի՞ք է, ուազմավարական մարտահրավեր, բանակցային կո՞ղմ, թե՛ ԱՄՆ քաղաքականությունը ծևավորող անկախ փոփոխական: Այս պատճառով աշխատանքը որոշ դեսլրում վերածվում է Աֆղանստանում ԱՄՆ քաղաքականության

Ալատմության վերլուծության, այլ ոչ թե հենց «Տալիբանի գործոնի» նպատակային վերլուծության:

2. Չնայած ներածությունում հայտարարված տեսական մոտեցումներին, հեղինակը ռեախզմ/նեղականողականություն մեթոդաբանությունը հետևողականորեն չի կիրառում յուրաքանչյուր ենթազվածում՝ իրադարձությունները վերլուծելու համար, այլ ավելի շուտ այդ մոտեցումները հիշատակվում են ընդհանուր համատեքստում:

3. Հեղինակը միակողմանի է դիտարկում թեման՝ ներկայացնելով այն միայն «ամերիկյան տեսանկյունից»: Աշխատանքում Տալիբանը դիտարկվում է հիմնականում որպես ԱՄՆ քաղաքանության օբյեկտ, այլ ոչ թե՝ ռացիոնալ, աղապտացվող սուբյեկտ:

4. Նախորդ կետից բխող այս թերությունը դրսերդվում է աղբյուրների ընտրության մեջ, որոնք հիմնականում արևմտյան են: Աշխատանքը կարող էր շահել, եթե հեղինակը օգտագործեր ավելի շատ ոուսաստանցի հետազոտողների՝ Ն. Շապիրո, Օ. Նեսսար, Գ. Մաչիտիծե, Վ. Կորգուն, Զ. Մակովեևա և այլոց ուսումնասիրությունները, որոնց աշխատանքներն ուղղակիորեն վերաբերում են հետազոտության թեմային: Նրանց գիտական վերլուծությունները կարող էին ապահովել թեմայի ավելի բազմակողմանի աղբյուրագիտական և տեսական լուսաբանումը: Բացի այդ, վերը նշված հեղինակների աշխատանքները հասանելի են համացանցում:

5. Աշխատանքը ավելի կիարստանար, եթե դրանում ներգրավված լինեին նաև Տալիբանի ներկայացուցիչների հայտարարություններ, հարցազրույցները, ուազմավարական տեքստեր, ինչպես նաև տարածաշրջանային առանցքային դերակատարների՝ Պակիստան, Իրան, Ռուսաստան, Չինաստան պաշտոնական տեսակետներն ու արխիվային նյութերը, որոնք անհրաժեշտ են «Տալիբանի գործոնի» ամբողջական պատկերը ստանալու համար:

6. Հեղինակը նշում է, որ ԱՄՆ մամուլի վերաբերյալ իրականացրել է «քանակական և որակական ուսումնասիրություն» (էջ 12): Սակայն ատենախոսության մեջ ո՞չ մեթոդաբանության բաժնում, ո՞չ էլ բուն տեքստում, ներկայացված չէ քանակական վերլուծության որևէ մեթոդաբանություն (կորպուսի սահմանում, կողավորման սկզբունքներ, վիճակագրական տվյալներ)

7. Հետազոտության ընթացքում արձանագրվել են որոշ վերլուծական բացթողումներ: Օրինակ ատենախոսությունում հիմնականում խոսվում է «Տալիբանի» մասին՝ որպես

միասնական, մենովիտ դերակատարի: Աշխատանքում գրեթե բացակայում է Տալիբանի ներքին խմբակցությունների (օրինակ՝ «Հաքքանի ցանցի» ռազմական թևի, Հելմանդի դաշտային հրամանատարների և այլն) միջև առկա հակասությունների, շահերի բախման և գաղափարական տարբերությունների վերլուծությունը: Ենթագլուխ 1.2-ը նկարագրում է Տալիբանի գաղափարախոսությունը (Դեոբանդի, Փուշթունվալի): Սակայն այն ներկայացվում է որպես ստատիկ, անփոփոխ համակարգ: Անդրադարձ չկա, թե ինչպես է 1990-ականների Տալիբանի գաղափարախոսությունն աղապտացվել և տարբերվել 2000-ականների ապստամբ Տալիբանից և 2020 թ. Դոհայի բանակցող դիվանագետայիբներից: Աշխատանքի Ենթագլուխ 2.3-ում հիշատակվում է ափիոնի տնտեսության դերը, սակայն այն չի դիտարկվում որպես Տալիբանի ռազմա-քաղաքական գործոնի առանցքային բաղադրիչ: Գլուխ 2.2-ում, խոսելով Բուշի դոկտրինի մասին, չի դիտարկվում այն առանցքային ներքին պայքարը, որը տեղի ունեցավ 2001-2003 թթ.: ԱՄՆ վարչակազմը պառակտված էր նեոպահպանողականների (Ռամսֆելդ, Վուֆովից), որոնք ցանկանում էին արագ «ավարտել» Աֆղանստանը և ներխուժել Իրաք, և ավանդական ռեախստների (Պաուլը) միջև, որոնք պնդում էին, որ հիմնական թշնամին ալ-Կահիդան է Աֆղանստանում: Ռեսուրսների այս շեղումը դեպի Իրաք 2003 թ. Տալիբանին թույլ տվեց վերակազմավորվել, ինչը աշխատանքում բավարար չափով վերլուծված չէ:

8. Աշխատանքում բազմիցս օգտագործում է «պետականաշխնություն» տերմինը, սակայն չի տայիս դրա հայեցակարգային վերլուծությունը: Ի՞նչ մոդելի պետականաշխնություն էր փորձում իրականացնել ԱՄՆ-ը: Ինչո՞ւ ծախողվեց աֆղանական բանակի կառուցման նախագիծը: Աշխատանքը փաստում է ծախողումը, բայց խորքային չի վերլուծում դրա պատճառները՝ կապված կոռուպցիայի, տեղական առանձնահատկությունները (ցեղային, էթնիկ) անտեսելու և կենտրոնացված մոդել պարտադրելու հետ:

Որոշեցին - ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից գտնում է.

ա) Չնայած վերը նշված որոշակի դիտողություններին Հարություն Մաթևոսյանի «Տալիբանի գործոնն ամերիկյան արտաքին քաղաքանության մեջ» ատենախոսությունը կարելի է համարել ավարտուն գիտական հետազոտություն, հույս հայտնելով, որ հետագայում ատենախոսը հաշվի կառնի մեր դիտարկումները և առաջարկությունները:

թ) Առենավտոսուլյունը բավարարում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակի աշխատանքը համապատասխամնում է Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական ասությանի հայցմանը:

ԵՊՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՄԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ. ԱՄԲԻՈՆԻ
ՎԱՐԻՉ,

Պ.Գ.Թ., ԴԱՏԵՆԸ.
ՀՈՅՐԱԲՅԱՆ

f. Leibowitz

5.

L.

Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Է. Լ. Զոհրաբյանի ստորագրությունը հաստատում էմ՝

et. L.

**ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
.....18.2025 թ.**

U.4.

20. 11. 25 p.

